*Հավելված N 2*
*2024 թվականի հունվարի 22-ին կնքված*
***«1032-11003/24-ՇՏ»*** *պայմանագրի*

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | ***«1032-11003/24-ՇՏ»*** |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2024 - 31.12.2024 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2024-30.09.2024 |
| Ներկայացման օր | 14.10.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

**Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝**

- Շահառուների կարիքի վերագնահատում, անհատական սոցիալական ծրագրերում համապատասխան գրանցումների կատարում,
- Ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում,
- Օրական մեկանգամյա սննդի տրամադրում՝ (շաբաթական 5 օր),
- Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և աջակցության տրամադրում, ներառյալ դեղորայք՝ ըստ կարիքի
- Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում, որը ներառում է լոգանքի, վարսահարդարման, լվացքի ծառայությունների մատուցում,
- Շահառուների զբաղվածության և ժամանցի կազմակերպում,
- Միջոցառումների կազմակերպում /էքսկուրսիաներ, տոների և հիշարժան օրերի նշում/:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝

- Անհատական սոցիալական ծրագրերում կատարվել են համապատասխան գրանցումներ:
- Շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն՝ սոցիալական խնդիրները լուծելու նպատակով:
- Պատրաստվել են 5 շահառուի նպաստի և աջակցության փաստաթղթերը և ուղղորդվել են ՄՍԾ:
- Շահառուներին տրամադրվել է սոցիալ-իրավական և սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, որի շնորհիվ լուծվել են շահառուների ընտանեկան կոնֆլիկտները:
- Շահառուները ուղեկցվել են պոլիկլինիկա, բանկ և ՄՍԾ:
- Կատարվել են զանգեր և 2 հացցեական տունայց՝ բացակա շահառուների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:
- Շահառուներին տրամադրվել է ամենօրյա սնունդ՝ ըստ նախապես մշակված սննդակարգի:
- Շահառուներին տրամադրվել է բուժքույրական խնամք, խորհրդատվություն և աջակցություն՝ ներառյալ ըստ կարիքի դեղորայք:
- Անցկացվել են թերապևտիկ վարժանքներ հատուկ մարզասարքերով:
- Ապահովվել է տարեցների անձնական հիգիենան ու խնամքը: Տրամադրվել է բաղնիք հաճախելու 136 տոմս: Շահառուները օգտվել են լվացքատան ծառայությունից: Լվացվել և արդուկվել են 22 տարեցի անկողնային պարագաները:
- Ապահովվել է շահառուների զբաղվածությունը զանազան խմբակների միջոցով՝
  - «Ստեղծագործող ձեռքեր» և «Մտքի թռիչք» խմբակները մաքրամեից պատրաստել են հետևյալ իրերը՝ թևնոց (31 հատ), գոտի (1 հատ), վզնոց (4 հատ), կախազարդ (28 հատ), հուլունքից թևնոց (10 հատ), պայուսակ (6 հատ), արջուկ (3 հատ): Ցուցադրվել են նաև տեսանյութեր՝ տեխնոլոգիաների ուսումնասիրման նպատակով:
  - «Հրաշագործները» խմբակը շարունակել է իր ակտիվ աշխատանքը 15 տարեցի հետ: Շահառուներին ներկայացվել են նոր զարդանախշեր, տեսական և գործնական գիտելիքներ: Պատրաստվել են մագնիսներ (120 հատ), կրծքազարդեր (30 հատ), բաժակի տակդիրներ (40 հատ), կախազարդեր (100 հատ):

- «Ֆիզ-արտ» խմբակի գործունեությունը ընթացել է հետևյալ թերապիաների միջոցով /արտթերապիա, ռիթմոթերապիա, դրամաթերապիա, ֆիզիոթերապիա, պարաթերապիա/: Եռամսյակի ընթացքում շաբաթական 5 օր, 16 շահառուի հետ կատարվել են ֆիզիոթերապևտիկ վարժություններ (ֆիզիոթերապիան թույլ է տալիս նվազագույնի հասցնել հնարավոր կողմնակի բարդությունները, բարձրացնում է մարմնի պաշտպանությունը, ամրապնդում է իմունային համակարգը և ակտիվացնում հյուսվածքների ու օրգանների կենսաքիմիական գործընթացները, դանդաղեցնում է ծերացման գործընթացը), Ֆիզիոթերապիայի շնորհիվ փոխվել է շահառուների կեցվածքը, կարգավորվել է իմունային համակարգը: Անցկացվել է օկուպացիոն թերապիա՝ շտկիչ վարժանքների միջոցով: Նրանք, ովքեր տեղաշարժվում էին ձեռնափայտով, սկսել են մարզանքների ժամանակ վարժությունները կատարել առանց ձեռնափայտ կիրառելու: Կենտրոնում կիրառվել է արտթերապիայի ճյուղերից մեկը՝ մանդալաթերապիան: Այն շրջաններից կազմված կամ շրջանում պատկերված նկար է, որը գունազարդելով արտահայտվում են հույզերը՝ գույների և ձևերի միջոցով և ստեղծվում է դրական հուզական ֆոն: Եռամսյակի ընթացքում թերապիան անցկացվել է 16 շահառուի հետ՝ 16 անգամ: Անցկացվել է ծեփագործության սեանս, որը զարգացնում է մանր մոտորիկան: Պլաստիլինի միջոցով ստեղծվել են պատկերներ, այս միջցառումը անցկացվել է 4 անգամ՝ 14 շահառուի հետ: Դրամաթերապիան՝ իրավիճակային կարճատև փոքրիկ բեմականացումների և դերախաղերի միջոցով անցկացվել է 8 անգամ՝ 15 շահառուի հետ: Ռիթմոթերապիայի սեանսեր անցկացվել են 5 անգամ՝ 16 շահառուի հետ: Դրա շնորհիվ շահառուները կարողանում են երաժշտության ռիթմը համապատասխանեցնել մարմնի ռիթմին: 3 անգամ՝ 16 շահառուի հետ անցկացվել են ասոցատիվ թեստեր, սթրեսակայունության թեստեր, ինչպես նաև կոնֆլիկտայնության թեստ, լրացվել են անձնական հոգեբանական թերթիկներ: 4 անգամ՝ 16 շահառուի հետ անցկացվել են հիշողության խաղեր, նեյրովարժությունների քարտերի կրկնում (ուղեղի երկու կիսագնդերի ակտիվացում):
- «Թաղիքագործության» և «Կարպետագործության» խմբակի կամավոր-խմբավարը շարունակել է աշխատել 6 հոգանոց խմբի հետ, որոնք այս ժամանակահատվածում կիսապատրաստ թաղիքե իրերը բերել են ավարտուն տեսքի: Ծանոթացել են կարպետի նոր զարդանախշերի հետ: Պատրաստել են 3 փոքր կարպետ:
- Երգի խմբակի կամավոր-խմբավարը շարունակել է աշխատել 8 հոգանոց խմբի հետ: Սովորել և ներկայացրել են 5 երգ:

Շահառուների ամենօրյա ժամանցն ապահովելու համար կատարվել են հետևյալ գործողությունները՝

- Անցկացվել են ինտելեկտուալ խաղեր և հոգեբանական թեստեր: «Մարզի՛ր հիշողությունդ», «Ժպիտ», «Քաղաքներ, անուններ»:
- Կազմակերպվել է միջոցառում Հայաստանի անկախության տոնին նվիրված, նշվել են հիշարժան օրերը՝ «Շախմատի միջազգային օր», «Երիտասարդների միջազգային օր»,« Մարդասիրության միջազգային օր», «Սրտի միջազգային օր», «Սուրճի միջազգային օր»,
- Անցկացվել են միջոցառումներ նվիրված՝ Վիկտոր Համբարձումյանի 116-ամյակին, Կոմիտասի 155-ամյակին: Միջոցառումների ավարտին ցուցադրվել են փաստավավերագրական ֆիլմեր:
- Կազմակերպվել է ֆիլմերի դիտում՝ «Շուրիկի արկածները», «Խոշոր շահում», «Կտոր մը երկինք», «Վարդապետի լռությունը»:
- 15 շահառու շարունակել են պարբերաբար այցելել «Ալցհայմերի խնամք Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից «Առողջ ուղեղի հայկական ծրագրի» շրջանակներում Գյումրու «Լոֆթ» ակումբում կազմակերպված «Հիշողության սրճարան» ժամանցային միջոցառումներին:
- «Տարեցների ցերեկային հոգածության կենտրոն»-ի շահառուների պատրաստած ձեռքի աշխատանքները ներկայացվել են Գյումրու օրվան նվիրված տոնավաճառին:
- Փորձի փոխանակման նպատակով կենտրոն են այցելել Կարա-Մուրզայի անվան երաժշտական քոլեջի ուսանողները: Տարեցները քոլեջի ուսանողների հետ իրականացրել են հմտությունների փոխանակում: Շահառուները ուսանողների հետ խաղացել են տարբեր մրցութային խաղեր և լավագույն մասնակիցները ստացել են պատվոգրեր: Միջոցառման ընթացքում երիտասարդները հանդես են եկել երաժշտական և նկարչական ծրագրերով, իսկ տարեցները երիտասարդ ուսանողների հետ կիսվել են մաքրամեխ, կարպետագործության, գոբելենի գաղտնիքներով: Սա ևս մեկ առիթ էր ամրապնդելու միջսերնդային կապը:
- Ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է Հայկական Կարիտասի կողմից իրականացվող «Արժանապատիվ կյանք տարեցներին» ծրագրի շրջանակներում անցկացվող «Մահ, կորուստ, սուգ: Հոգեբանական օրինաչափություններ և հաղթահարում» դասընթացին:

*Վերոնշյալ գործողությունների արդյունքում շահառուները սոցիալականացված են, մեկուսացված չեն, ներգրավված են տարբեր խմբակների, սոցիալական և ժամանցային միջոցառումների մեջ: Նրանք շրջապատված են խնամքով և ուշադրությամբ: Նրանց մեկուսացման և մենակության զգացումը հասցվել է նվազագույն մակարդակի:*

*Բարելավված ներառումը լայն հասարակության մեջ ակնառու է: Նրանք իրենց համարում են հասարակության լիիրավ անդամներ:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

- Հուլիսի 1-«Ծերությո՛ւն, ես ընդունել եմ քեզ» խորագրով միջոցառում, որը կոչված է ցույց տալու, որ ծերությունը վերջը չէ, եթե ուզում եք երկար ապրել, պետք է պատրաստ լինել ծերանալուն, պետք է ընդունենք ծերությունը և պահենք կենսական ակտիվությունը նաև ծեր տարիքում:
  https://www.facebook.com/share/v/oRaiK4oHdgkbw9kh/?mibextid=WC7FNe
- Հուլիսի 20-Շախմատի միջազգային օրը «Տարեցների Ցերեկային Հոգածության կենտրոն»-ի բակում, կենտրոնի և «Տնային խնամք» ծրագրի շահառուները միասին խաղացին շախմատ և նարդի: Սա առիթ էր ստեղծելու կապ Հայկական Կարիտասի ծրագրերի շահառուների միջև:
  https://www.facebook.com/share/p/qgoAbwrtoYG46fs6/?mibextid=WC7FNe
- Հուլիսի 28-«Տարեցների ցերեկային հոգածության կենտրոն»-ի շահառուների պատրաստած ձեռքի աշխատանքները ներկայացվել են Գյումրու օրվան նվիրված տոնավաճառին:
  https://www.facebook.com/share/p/KRRcnbXsuZvSSCRe/?mibextid=WC7FNe
  https://www.facebook.com/share/r/cQoVNQY3BV763bNf/?mibextid=WC7FNe
- Օգոստոսի 13-Երիտասարդների միջազգային օրը դարձավ յուրահատուկ առիթ, որը համախմբեց Գյումրու «Կարա-Մուրզայի անվան» պետական երաժշտական քոլեջի ուսանողներին և Հայկական Կարիտասի Գյումրու Տարեցների Ցերակային հոգածության կենտրոնի շահառուներին: Նրանք միացան հմտությունների փոխանակմանը՝ անցկացնելով ուրախ մրցութային խաղեր, որոնց արդյունքում լավագույն մասնակիցները ստացան պատվոգրեր:
  https://www.facebook.com/share/p/oSqdyRCLExJAoQeM/?mibextid=WC7FNe
- Օգոստոսի 19-Մարդասիրության միջազգային օր:
  https://www.facebook.com/share/v/k48PDSL1NJ531ABN/?mibextid=WC7FNe

Ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են: Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն և նկարներ:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է իրականացնել՝

- Ամենօրյա ցերեկային խնամք (շաբաթական 5 օր)
- Սոցիալ-վերականգնողական օգնության տրամադրում
- Սոցիալ-իրավական օգնության տրամադրում
- Կազմակերպվելու է տարբեր ժամանցային, ինտելեկտուալ խաղեր և միջոցառումներ:
- Կանոնավոր բժշկական ստուգումներ և հնարավոր դեղորայքով ապահովում, զանազան հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ զրույցներ, առողջ ապրելակերպին նպաստող միջոցառումներ:
- Մասնագիտական, հիշատակի և այլ տոների նշում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

- Հայկական Կարիտասի այլ ծրագրով բոլոր շահառուներին տրվել է վառելիքի ծախսերի փոխհատուցում
- Հայկական Կարիտասի ղեկավարության կողմից տրամադրվել է շաքարի մակարդակը չափող սարքեր դիաբետով հիվանդ 10 շահառուի:
- Անհատ բարերարների կողմից 15 շահառուի տրամադրվել է հագուստ:
- Առավել կարիքավոր շահառուները շարունակում են անվճար օգտվել քաղաքային տրանսպորտից՝ հատուկ քարտերի միջոցով, որը տրամադրել է Գյումրու համայնքապետարանը:
- Անհատ բարերարի կողմից կազմակերպվել է կենտրոնի 1-օրյա սննդի տրամադրումը մատաղի տեսքով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ցերեկային կենտրոնում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 44/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 39 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 0 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 0 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 44 |
| 3. | կարիքի գնահատում | 44 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում | 44 |
| 5. | Խմբակների կազմակերպում | 44 |
| 5.1 | Թաղիքագործություն | 6 |
| 5.2 | Ստեղծագործող ձեռքեր, Մտքի թռիչք | 14 |
| 5.3 | Հրաշագործները | 14 |
| 5.4 | Ֆիզ-արտ | 16 |
| 5.5 | Երգ | 8 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում | 44 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 40 |
| 7. | Այլ ծառայություն<br>• բուժքույրի ծառայություններ | 44 |

| | | |
|---|---|---|
| | • լվացքատան ծառայություններ<br>• լոգանքի ծառայություններ | 22<br>136 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան ____________________

«14»10.2024 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ